ԹԵՄԱ 3. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՅԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ XIX ԴԱՐՈՒՄ

§ 24. ՀՆԴԿԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐՈՒՄ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԱՑՈՒՄԸ

1

Հողը համարվում էր խոշոր, միջին կամ մանր ֆեոդալի սեփականությունը: Գյուղական համայնքները մշակում էին իրենց հատկացված հողերը՝ ֆեոդալին վճարելով ստացված բերքի երրորդ մասը: Բարենպաստ կլիմայական պայմանները թույլ էին տալիս տարեկան երկու անգամ բերք ստանալ: Համայնական կարգը շատ ամուր էր, սերնդեսերունդ այն մնում էր անփոփոխ: Մասնավոր սեփականության առաջացումը ամեն կերպ արգելակվում էր:

XVIII դարում Հնդկաստանում փոքր ինչ աշխուժացել էր արտաքին առևտուրը, քաղաքները դարձել էին արհեստի և առևտրի կենտրոններ: Տեղ-տեղ առաջացել էին ցրված մանուֆակտուրաներ: Հնդիկ արհեստավորները պատրաստում էին բարձրորակ բրդյա, բամբակյա, մետաքսյա գործվածքներ, գեղեցիկ իրեր՝ ոսկուց, փղոսկրից, թանկագին քարերից, հարուստ դրվագված պողպատյա սրեր և դաշույններ: Այդ ապրանքները և համեմունքները մեծ պահանջարկ էին վայելում եվրոպացիների հետ առևտրում:

2

Ապստամբության առիթ ծառայեց սիփահիներին խոզի յուղով (դրան դիպչելը արգելված էր մուսուլմաններին) և տավարի յուղով պատված (դրան դիպչելը արգելված էր հինդուիստներին) փամփուշտներ բաժանելը: Ապստամբները գրավեցին Դելին, ստիպեցին կայսրին հայրենիքը ազատագրելու պայքարի կոչ ստորագրել: Ապստամբությունն ընդգրկեց Հնդկաստանի հյուսիսային և կենտրոնական շրջանները: Պայքարին միացան արհեստավորներն ու գյուղացիները, նաև այն իշխաններն ու կալվածատերերը, որոնք գաղութարարների կողմից զրկվել էին իրենց տիրույթներից: